ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 մայիսի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

61
(3270)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի՝ 2025 թվականի տարեկան հայտարարագիրը՝հասկանալու, թե ինչ գույք, եկամուտներ ու պարտավորություններ ունի Հայաստանի ամենաերիտասարդ նախարարներից մեկը: Գալյանը ՔՊ նախընտրական ցուցակի 6-րդ համարն է:

2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Սրբուհի Գալյանը հայտարարագրել է 5 անշարժ գույք: Դրանց թվում են Կոտայքի մարզի Նաիրի համայնքում գտնվող հողամասը, որը նա ձեռք է բերել 2023 թվականի փետրվարի 17-ին՝գնման եղանակով, Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում գտնվող համատեղ սեփականությամբ հողամասը, որը գնվել է 2015 թվականի դեկտեմբերի 8-ին, ինչպես նաեւ Դիլիջանում գտնվող անհատական բնակելի տունը, որը ձեռք է բերվել 2015 թվականի օգոստոսի 12-ին:
Նախարարը հայտարարագրել է նաեւ Երեւանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գտնվող երկու բնակարան: Դրանցից մեկը ձեռք է բերվել 2022 թվականի սեպտեմբերի 20-ին՝ գնման եղանակով, իսկ մյուսը ստացել է նվիրատվությամբ՝2023 թվականի փետրվարի 3-ին: Տրանսպորտային միջոց Սրբուհի Գալյանը չի հայտարարագրել:

Հայտարարագրի համաձայն՝2025 թվականի դեկտեմբերի 15-ին նա գնել է «Յունիբանկ» ԲԲԸ-ի պարտատոմսեր՝ 11 միլիոն 998 հազար 5 դրամ արժողությամբ: Նաեւ հայտարարագրել է 6 միլիոն 500 հազար դրամի հանձնված եւ վերադարձված փոխառություն «Ադրեսս» ՍՊԸ-ին, ինչպես նաեւ 2 միլիոն դրամ բանկային ավանդ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



Նախընտրական կրքերը թեժանում են, իսկ քաղաքական պայքարի բառապաշարը՝գնալով կոշտանում: Նախօրեին թիրախում հայտնվեց հայկական ամենահայտնի բրենդներից մեկը՝«Ջերմուկ Գրուպ»-ը: Դիլիջանում տեղի ունեցած հանդիպման ժամանակ «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչները՝ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ իրականացվող քարոզչության շրջանակներում իրենց ելույթներում անդրադարձել են «Ջերմուկ Գրուպ»-ի սեփականատեր Աշոտ Արսենյանին՝ ակնարկելով, թե Ջերմուկում իշխանությունների համար ձայներ են հավաքում. «Ջերմուկում Նիկոլի համար ձայն եք հավաքում, որ ի՞նչ անի, թշնամուն բերի՞ ձեր տուն, արդեն բերել է Ջերմուկի մատույցներ»: «Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցում է ուղարկել «Ջերմուկ Գրուպ»-ի սեփականատեր Աշոտ Արսենյանին՝խնդրելով մեկնաբանել այս հայտարարությունները: Վերջինիս պատասխանը, սակայն, ոչ միայն կոշտ էր, այլեւ բացահայտ քաղաքական ենթատեքստերով լի: Արսենյանը հայտարարեց, որ «կրտսեր քոչարյանականները» հերթական անգամ փորձում են իրական խնդիրներից ուշադրություն շեղել՝սեւացնելով ու վարկաբեկելով այն ամենը, ինչը տարիներով հեղինակություն է ստեղծել Հայաստանի համար:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հրապարակել է 2026 թվականի մայիսի 4-6-ն ընկած ժամանակահատվածում Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների բանկային հաշիվների ֆինանսական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկանքը: Փաստաթուղթը ներկայացնում է քաղաքական ուժերի ստացած նվիրատվությունները, անդամավճարները, կատարված ծախսերը եւ բանկային մնացորդները: Ամենախոշոր ֆինանսական հոսքերը գրանցվել են «Ուժեղ Հայաստան», «Բարգավաճ Հայաստան» եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների մոտ: «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը երեք օրվա ընթացքում ստացել է 108 մլն 898 հազար դրամ նվիրատվություն՝63 անձից: Միաժամանակ կուսակցությունը կատարել է խոշորածավալ ծախսեր: Աշխատավարձերի, ծառայությունների մատուցման եւ քաղաքացիաիրավական պայմանագրերի վճարների համար փոխանցվել է 67 մլն 58 հազար դրամ՝ 351 փոխանցմամբ: Բացի այդ, կուսակցությունը 34 մլն 577 հազար 333 դրամ է ծախսել անշարժ գույքերի վարձակալության վրա: Փաստաթղթում նշվում է, որ 102 փոխանցումներով վարձակալվել են տարածքներ Կոտայքի, Գեղարքունիքի, Արմավիրի, Լոռու, Սյունիքի, Արարատի, Արագածոտնի, Շիրակի, Վայոց ձորի եւ Տավուշի մարզերում, ինչպես նաեւ Երեւանում:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը աջակցություն է հայտնել Իրաքի վարչապետի թեկնածու Ալի ալ-Զահիդիին՝քայլ, որը որոշ շրջանակների համար անսպասելի է համարվել: Սակայն Վաշինգտոնի այս որոշման հիմքում, ըստ վերլուծությունների, հիմնական պատճառը Իրանի ազդեցության նվազեցման ռազմավարությունն է Իրաքում: Իրաքի խորհրդարանի հիմնական դաշինքը՝«Կոորդինացիոն շրջանակը», որը բաղկացած է շիա ուժերից եւ սերտ կապեր ունի Իրանի հետ, սկզբում աջակցել էր նախկին վարչապետ Նուրի ալ-Մալիքիին: Սակայն ԱՄՆ-ի համար Իրանի կողմնակից թեկնածուի առաջադրումը համարվել է «կարմիր գիծ», հատկապես այն պայմաններում, երբ Իրաքում գործող իրանամետ զինված խմբավորումները շարունակում են հարձակումներ իրականացնել ամերիկյան շահերի դեմ: Թրամփը հրապարակավ դեմ էր արտահայտվել ալ-Մալիքիի թեկնածությանը՝ նույնիսկ սպառնալով դադարեցնել Իրաքին տրամադրվող օգնությունը: Վաշինգտոնը նաեւ ժամանակավորապես սառեցրել էր Իրաքի նավթային եկամուտներից փոխանցվող միջոցները, որոնք պահվում են Նյու Յորքի Դաշնային պահուստային բանկում, ինչպես նաեւ դադարեցրել էր անվտանգության ոլորտում համագործակցությունը: Այս ճնշումների ֆոնին Իրաքի քաղաքական դաշինքը, ըստ աղբյուրների, ստիպված է եղել փոխզիջման գնալ եւ համաձայնել Ալի ալ-Զահիդիի թեկնածությանը՝որպես համաձայնեցված տարբերակ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՆ Է»

Armlur.am-ը զրուցել է Մհեր Արմենիայի հետ:

- Պարոն Մեսրոպյան, երկար ժամանակ Ձեզ տեսել ենք ընդդիմադիր դաշտում, սակայն այսօր արդեն աջակցում եք գործող իշխանությանը եւ մասնակցում նրանց քարոզարշավին: Ինչո՞վ է պայմանավորված այս կտրուկ փոփոխությունը:

- Այո՛, ճիշտ եք նկատել: Ինձ մոտ մտածելակերպի ու գաղափարական փոփոխություն տեղի ունեցավ: Երկար ժամանակ լինելով ընդդիմադիր դաշտում՝ ես տեսա այնտեղի գործունեությունը, շատ բաներ վերլուծեցի ու հասկացա, որ այն օրակարգը, որն այսօր առաջ է տանում իշխանությունը, ինձ ավելի հոգեհարազատ է: Խոսքը խաղաղության օրակարգի մասին է: Իհարկե, ընդդիմադիր դաշտում կան մարդիկ, որոնք իսկապես հայրենասեր են, բայց կան նաեւ մարդիկ, որոնք ավելի շատ իրենց անձնական շահերով են առաջնորդվում, ոչ թե ժողովրդի խնդիրներով:

- Բայց ի՞նչն է կոնկրետ Ձեզ դուր գալիս գործող իշխանության քաղաքականությունից:

- Ինձ համար առաջնայինը խաղաղության օրակարգն է: Մենք շատ դժվարությունների միջով ենք անցել, պատերազմ ենք տեսել, կորուստներ ունեցել: Այս իրավիճակում ամենակարեւորը խաղաղությունը պահպանելն է: Մնացած հայտարարությունները կամ տարբեր տեսակետները չեմ ուզում մեկնաբանել, որովհետեւ կարծում եմ՝ այսօր պետք է ամեն ինչ անել, որպեսզի խաղաղությունը պահպանվի:

- Այսինքն՝ հա՞շտ եք այն մտքի հետ, որ Արցախն այլեւս Հայաստանի մաս չէ:

- Ինձ համար Արցախը միշտ եղել է ու կմնա հայկական: Ես էլ եմ ունեցել շատ հիշողություններ Արցախից, համերգներ եմ ունեցել այնտեղ, շատ եմ եղել: Բայց այսօր ունենք այն իրականությունը, որը կա: Դժվար է բոլորիս համար, հատկապես արցախցիների համար, բայց մենք պետք է կարողանանք պահպանել խաղաղությունը եւ առաջ նայել:

- Այսօր մշակույթի բազմաթիվ գործիչներ թիրախավորվում են իրենց քաղաքական դիրքորոշման պատճառով: Դուք ինչպե՞ս եք վերաբերվում դրան:

- Ես կարծում եմ՝ քաղաքական հայացքները չպետք է մարդկանց միջեւ թշնամանք առաջացնեն: Իմ շատ կոլեգաներ ընդդիմադիր դաշտում են, ես՝ իշխանության կողմնակից, բայց մենք շարունակում ենք շփվել, հարգել իրար: Սա նորմալ է: Մարդիկ կարող են տարբեր քաղաքական հայացքներ ունենալ, բայց դրա պատճառով չպետք է կռվեն կամ միմյանցից հեռանան:

- Ընդդիմադիրները մեղադրում են Նիկոլ Փաշինյանին Արցախի կորստի եւ բազմաթիվ խնդիրների համար: Դուք ինչպե՞ս եք վերաբերվում այդ քննադատություններին:

- Երբ ես ընդդիմադիր դաշտում էի, նույնպես քննադատում էի իշխանությանը: Բայց հիմա ընտրել եմ այս իշխանության օրակարգը եւ կանգնել եմ ժողովրդի ընտրության կողքին: Դա իմ իրավունքն է: Ամեն մարդ ունի իր կարծիքը:

- Այսօր հաճախ խոսվում է այն մասին, որ իշխանության հիմնական մրցակիցներին թիրախավորում են: Ինչպե՞ս եք վերաբերվում այդ քննադատություններին:

- Ես մի բան եմ նկատել՝ վարչապետ Փաշինյանին ժողովուրդը սիրում է: Երբ տեսնում եմ մարդկանց վերաբերմունքը նրա հանդեպ, հասկանում եմ, որ դա իրական է: Սերը շատ կարեւոր բան է, եւ ես հավատում եմ, որ բարին վերջում հաղթելու է:

- Կարծում եք, որ Նիկոլ Փաշինյանը ժողովրդավար առաջնո՞րդ է:

- Իմ կարծիքով՝ այո՛: Հիշե՛ք նախկին ժամանակները. մարդիկ անգամ չէին կարող ազատ արտահայտվել իշխանության մասին: Այսօր մարդիկ ազատ խոսում են, քննադատում են, եւ դա արդեն փոփոխություն է: Հեղափոխությունից հետո շատ բան փոխվեց, եւ ես դա դրական եմ գնահատում:

- Ի՞նչ կցանկանաք ասել հասարակությանը:

-Կուզենամ, որ մարդիկ ավելի հանդուրժող լինեն միմյանց նկատմամբ: Քաղաքական հայացքները չպետք է բաժանեն մարդկանց: Մենք բոլորս նույն երկրի քաղաքացիներ ենք եւ պետք է փորձենք պահպանել խաղաղությունը եւ միասնականությունը:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«Հայաստան» դաշինքի Սպիտակի գրասենյակում խուզարկություն է տեղի ունեցել, մեկ անձ ձերբակալվել է: «Հայաստան» դաշինքն այն անվանել է «հերթական էժանագին փորձ». «Ձերբակալված անձը տեղափոխվել է Երեւան: Խուզարկությունն իրականացրել է Հակակոռուպցիոն կոմիտեն:

Սպիտակի մեր գրասենյակում տեղի ունեցող գործողությունները եւ մեր թիմակիցների թիրախավորումը անակնկալ չէ: Իրավապահ համակարգի նմանօրինակ գործելաոճը վաղուց արդեն դարձել է գործող վարչախմբի ձեռագիրը:

Այս գործողությունները եւս մեկ անգամ փաստում են. իշխանությունը չունի հանրային աջակցություն եւ սեփական ուժերի հանդեպ վստահություն եւ իր վերարտադրությունը ապահովելու համար դիմում է նման քայլերի: Տեղի ունեցողը ոչ թե իրավական գործընթաց է, այլ հերթական էժանագին փորձ՝ խոչընդոտելու մեր կառույցների բնականոն աշխատանքը: Նմանատիպ մեթոդներով իշխանությունը փորձում է վախի մթնոլորտ սփռել, սակայն սա միայն ամրապնդում է մեր համոզմունքը, որ ընտրված ճանապարհը ճիշտ է: Որեւէ խուզարկություն կամ ձերբակալություն չի կարող փոխել մեր քաղաքական օրակարգը. մեր թիմը գիտի ինչի համար է պայքարում: Մեր քաղաքացիներին կոչ ենք անում իշխանության կողմից իրականացված բոլոր հակահիրավական քայլերի պատասխանը տալ հունիսի 7-ին՝ մերժելով Հայաստանում հաստատված ավտորիտար ռեժիմին»:

ԲՈՂՈՔՈՒՄ ԵՆ

Երեւանի հասարակական տրանսպորտում խնդիրները շարունակում են մնալ քաղաքացիների դժգոհության հիմնական պատճառներից մեկը:

Վերջին շրջանում հատկապես հաճախ են արձանագրվում վեճեր ավտոբուսներում: Քաղաքացիների մի մասը դժգոհում է, որ քաղաքապետարանի վերջին կարգադրությունից հետո վարորդները սկսել են չբացել ավտոբուսների մեջտեղի եւ հետեւի դռները՝ ստիպելով բոլոր ուղեւորներին մուտք գործել միայն առջեւի դռնով: Քաղաքացիների խոսքով՝ սա արվում է այն նպատակով, որպեսզի վարորդները վերահսկեն յուրաքանչյուր ուղեւորի վճարումը:

Տեսանյութը՝ ArmLur.am կայքում

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ

Լատվիայի վարչապետ Էվիկա Սիլինան հինգշաբթի օրը հայտարարել է, որ հրաժարական է տալիս պաշտոնից՝ փաստացի հանգեցնելով երկրի կառավարական կոալիցիայի փլուզմանը: Քաղաքական ճգնաժամը տեղի է ունենում հոկտեմբերին նախատեսված խորհրդարանական ընտրություններից առաջ:

Վարչապետի անսպասելի հրաժարականը հաջորդել է ներքաղաքական լարվածության մի շարք զարգացումներին, այդ թվում՝ պաշտպանության նախարար Անդրիս Սպրուդսի հրաժարականին: Վերջինս պաշտոնը լքել էր այն բանից հետո, երբ Ուկրաինայի անօդաչու սարքերը, որոնք շեղվել էին Ռուսաստանի տարածքից, ներխուժել էին Լատվիայի օդային տարածք, իսկ արձագանքը գնահատվել էր ուշացած: Դրոնների միջադեպի ընթացքում մի քանի անօդաչու սարքեր հատել էին Լատվիայի սահմանը՝ ընկնելով Բալվի եւ Լուձա քաղաքների մոտակայքում: Դրանցից մեկը առաջացրել էր հրդեհ նավթային պահեստում: Թեեւ զոհեր չեն գրանցվել, բնակիչները նախազգուշացում ստացել էին դեպքից մոտ մեկ ժամ անց:

Լատվիայի իշխանությունները նշել են, որ անօդաչու սարքերը եղել են ուկրաինական ծագման, սակայն շեղվել են ռուսական գործողությունների հետեւանքով: Վարչապետ Սիլինան ավելի վաղ հայտարարել էր, որ այս միջադեպը ցույց է տվել պաշտպանության ոլորտում լուրջ բացեր եւ համակարգային թերություններ: Միջադեպից հետո պաշտպանության նախարար Սպրուդսը հրաժարական էր տվել՝ ընդունելով, որ ոլորտում դեռեւս կան լուծման ենթակա խնդիրներ: Միեւնույն ժամանակ նա ընդգծել էր, որ երկրի զինված ուժերը եւ դաշնակիցները պատրաստ են պաշտպանել Լատվիան:

Փորձագետների գնահատմամբ՝ երկրի օդային պաշտպանության համակարգում առկա են մի շարք խնդիրներ՝ ներառյալ ցածր թռիչքի բարձրության վրա գտնվող օբյեկտների հայտնաբերման սահմանափակումները, ինչպես նաեւ վաղ նախազգուշացման համակարգերի թերությունները:

Լատվիան, միեւնույն ժամանակ, պատրաստվում է ուժեղացնել իր պաշտպանական կարողությունները՝ ԵՄ-ի միջոցով մոտ 3.49 միլիարդ եվրոյի վարկային ծրագրի շրջանակում: Այդ միջոցները նախատեսվում է ուղղել օդային պաշտպանության համակարգերի, անօդաչու սարքերի եւ հակադրոնային տեխնոլոգիաների ձեռքբերմանը:

ՆԱՏՕ-ում Լատվիայի ներկայացուցիչները քննարկումներ են ունեցել դաշինքի ղեկավարության հետ՝ երկրի օդային պաշտպանության համակարգերի ամրապնդման եւ նոր տեխնոլոգիաների ներդրման շուրջ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՌԴ-Ն ՀԱՐՎԱԾԵԼ Է ԿԻԵՎԻ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻՆ

Մայիսի 14-ի՝ հինգշաբթի գիշերը եւ առավոտյան, ռուսական բանակը անօդաչու թռչող սարքերով եւ բալիստիկ հրթիռներով հարվածներ է հասցրել Կիեւին: Հարվածներ են հասցվել մայրաքաղաքի մի քանի շրջանների, կան զոհերի մասին տեղեկություններ: Այս մասին հայտնել են տեղական իշխանությունները եւ Ներքին գործերի նախարարության մամուլի ծառայությունը: Ռուսական բանակը նախորդ գիշերվանից ի վեր լայնածավալ հարձակում է սկսել Կիեւի վրա: Հարվածները շարունակվել են ամբողջ առավոտյան: Մայրաքաղաքի մի քանի շրջաններում գրանցվել են հարվածներ, հրդեհներ եւ քաղաքացիական ենթակառուցվածքների վնասներ: Կիեւի քաղաքային ռազմական վարչակազմի ղեկավար Թիմուր Տկաչենկոն հայտնել է առնվազն մեկ զոհի մասին: Հարձակման հետեւանքով վիրավորվել է նաեւ տասնվեց մարդ:

ԱՄՆ-Ն ՀՈՒՅՍ ՈՒՆԻ ՀԱՄՈԶԵԼ

ԱՄՆ վարչակազմը հույս ունի, որ կկարողանա համոզել Չինաստանին ազդել Իրանի վրա՝Մերձավոր Արեւելքում հակամարտությունը կարգավորելու եւ Պարսից ծոցում իրավիճակը կայունացնելու համար, հայտարարել է ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն: Նրա խոսքով՝ «Չինաստանի շահերից է բխում այս խնդրի լուծումը»: Ռուբիոն Fox News-ին տված հարցազրույցում նշել է. «Մենք հույս ունենք համոզել նրանց ավելի ակտիվ դեր խաղալ՝ ստիպելու Իրանին հրաժարվել այն գործողություններից, որոնք նա այժմ իրականացնում է Պարսից ծոցում»: Պետքարտուղարը նաեւ նշել է, որ չինական նավերը «կանգնած են Պարսից ծոցում»: Նրա գնահատմամբ՝ Մերձավոր Արեւելքում ընթացող հակամարտությունը «լուրջ անկայունության աղբյուր է»: «Այն սպառնում է ավելի շատ ապակայունացնել Ասիան, քան աշխարհի ցանկացած այլ տարածաշրջան, քանի որ այն մեծապես կախված է էներգետիկ մատակարարումներից եւ նեղուցներից»,-հավելել է Ռուբիոն:

ԱԿՏԻՎԱՑՆՈՒՄ Է ԻՐ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ-Ն ՍՏԱՑԵԼ Է ԱՌԱՋԻՆ CAESAR ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Լեհական ռազմական Defence24.com կայքը ծավալուն անդրադարձ է կատարել Հայաստան-Ֆրանսիա ռազմական համագործակցությանը՝ նշելով, որ Հայաստանը ստացել է ֆրանսիական առաջին CAESAR հրետանային համակարգերը, ինչը, ըստ հոդվածի, ոչ միայն սպառազինության մատակարարում չէ, այլ Ֆրանսիայի ավելի լայն ռազմավարության մաս Հարավային Կովկասում:

Հոդվածում նշվում է, որ Փարիզը փորձում է թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում եւ Հայաստանը վերածել երկարաժամկետ անվտանգության գործընկերոջ:

Defence24.com-ի գնահատմամբ՝ Լեռնային Ղարաբաղի անկումից եւ շուրջ 100 հազար հայերի բռնի տեղահանումից հետո Երեւանը հասկացել է, որ ռուսական անվտանգության երաշխիքներն այլեւս բավարար չեն:

Կայքը գրում է, որ CAESAR համակարգերի մատակարարումը կարեւոր քայլ է Հայաստանի զինված ուժերի վերազինման գործընթացում, քանի որ Երեւանը փորձում է անցում կատարել ՆԱՏՕ-ական չափանիշներին համապատասխան զինատեսակների: Հոդվածում հիշատակվում է նաեւ, որ Հայաստանը Ֆրանսիայից արդեն ստացել է Bastion զրահամեքենաներ, GM200 ռադարներ, Mistral 3 ՀՕՊ համակարգեր եւ գիշերային տեսանելիության սարքեր:

Defence24.com-ը նաեւ ընդգծում է, որ Հայաստանը վերջին շրջանում ակտիվորեն դիվերսիֆիկացնում է սպառազինության աղբյուրները՝ զենք ձեռք բերելով ոչ միայն Ֆրանսիայից, այլեւ Հնդկաստանից:

Ըստ հոդվածի՝ Երեւանը փորձում է այլընտրանքներ ստեղծել, քանի որ այլեւս ամբողջությամբ չի վստահում Ռուսաստանին որպես անվտանգության միակ երաշխավորի:

Հոդվածում նշվում է նաեւ, որ Ֆրանսիան նման քաղաքականությամբ փորձում է պատասխանել Ռուսաստանի ազդեցությանը՝ հատկապես այն բանից հետո, երբ Մոսկվան Աֆրիկայի մի շարք երկրներում՝ Մալիում, Բուրկինա Ֆասոյում եւ Կենտրոնաաֆրիկյան Հանրապետությունում, սահմանափակել է ֆրանսիական ազդեցությունը: Ըստ կայքի՝ այժմ Փարիզը փորձում է ավելի ակտիվ ներկայություն ապահովել Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում: Կայքը հիշեցնում է, որ Հայաստանում շարունակում է տեղակայված մնալ ռուսական 102-րդ ռազմաբազան, սակայն միեւնույն ժամանակ Երեւանը սառեցրել է մասնակցությունը ՀԱՊԿ-ին եւ պահանջել ռուս սահմանապահների դուրսբերումը «Զվարթնոց» օդանավակայանից: Այդ քայլերը հոդվածագիրը գնահատում է որպես քաղաքական կարեւոր ազդակ Մոսկվայի համար:

Defence24.com-ը լեհական ռազմական եւ անվտանգության թեմաներով մասնագիտացված լրատվական-վերլուծական կայք է, որը լուսաբանում է պաշտպանության, սպառազինության, ՆԱՏՕ-ի եւ աշխարհաքաղաքական զարգացումների թեմաները:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՆՀԱՆԳՍՏԱՑՐԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ Պեկին կատարած այցը եւ Չինաստանի նախագահ Սի Ցզինպինի հետ բանակցությունները մեծ ուշադրության կենտրոնում են հայտնվել ոչ միայն Վաշինգտոնում ու Պեկինում, այլեւ Եվրոպայում:

Եվրոպական երկրներում մտահոգությամբ հետեւում են, թե ինչ պայմանավորվածությունների կարող են հասնել երկու գերտերությունները առեւտրի, անվտանգության, Թայվանի եւ Իրանի պատերազմի շուրջ քննարկումների ընթացքում:

Թրամփը Պեկին մեկնելուց առաջ հայտարարել էր, որ ԱՄՆ-ն եւ Չինաստանը «երկու գերտերություններն» են՝ ընդգծելով, որ ԱՄՆ-ն աշխարհում առաջին ռազմական ուժն է, իսկ Չինաստանը՝երկրորդը: Իր հերթին Սի Ցզինպինը խոսել է «Թուկիդիդեսի թակարդից» խուսափելու անհրաժեշտության մասին՝ նկատի ունենալով այն տեսությունը, ըստ որի՝ աճող տերության եւ արդեն հաստատված գերտերության միջեւ մրցակցությունը հաճախ ավարտվում է պատերազմով:

Եվրոպայում մտավախություն կա, որ Վաշինգտոնն ու Պեկինը կարող են պայմանավորվածությունների հասնել՝շրջանցելով եվրոպական շահերը: Հատկապես զգայուն է համարվում հազվագյուտ հողային մետաղների հարցը, քանի որ Չինաստանը վերահսկում է այնպիսի ռազմավարական կարեւորություն ունեցող 17 տարրերի մատակարարումները, որոնք անհրաժեշտ են ժամանակակից տեխնոլոգիաների արտադրության համար: Փորձագետների գնահատմամբ՝ Պեկինը նախկինում արդեն օգտագործել է այդ լծակը՝ սահմանափակելով արտահանումը:

Գերմանական Marshall Fund հիմնադրամի փորձագետ Յոնաս Պարելլո-Պլեսները նշել է, որ Թրամփ-Սի բանակցությունները գնալով ավելի երկկողմ բնույթ են ստանում, իսկ Թրամփը «խոսելու է միայն իր անունից»: Եվրոպական խորհրդարանի պատգամավոր Միխայել Բլոսն էլ հայտարարել է, որ Եվրոպան փաստացի ներկա չէ բանակցային սեղանին, մինչդեռ քննարկվող հարցերը կարող են ուղղակիորեն ազդել մայրցամաքի ապագայի վրա:

Միաժամանակ Եվրոպայում շարունակվում են քննարկումները Չինաստանից կախվածության շուրջ: ԵՄ երկրների էներգետիկայի նախարարները Կիպրոսում անդրադարձել են այն փաստին, որ Չինական ընկերությունները վերահսկում են Եվրոպայի մարտկոցների եւ էներգիայի պահպանման համակարգերի շուկայի մեծ մասը: Ըստ Wood Mackenzie հետազոտական ընկերության տվյալների՝ Չինաստանին բաժին է ընկնում Եվրոպայի բնակարանային էներգիայի պահպանման շուկայի ավելի քան 80 տոկոսը եւ լիթիում-իոնային մարտկոցների ներմուծման գրեթե 88 տոկոսը:

Փորձագետները նշում են, որ Եվրոպան կարող է մասամբ նվազեցնել կախվածությունը Չինաստանից, սակայն առաջիկա տասնամյակում ամբողջ մատակարարման շղթայի փոխարինումը գործնականում անհնար է թվում:

Այս ֆոնին Եվրահանձնաժողովը նաեւ ուղարկում է պատվիրակություն Բուդապեշտ՝ քննարկելու Հունգարիային նախատեսված միլիարդավոր եվրոպական միջոցների ապաշրջափակման հնարավորությունները: Քննարկվում է նաեւ հունգարական Exim Bank-ի միջոցով ֆինանսավորումը կազմակերպելու տարբերակը, թեեւ Բրյուսելում մտահոգություններ կան վերահսկողության թուլացման հետ կապված:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

1 ԱՄԻՍ ԱՆՑ

ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ՀՄԿՈՒՄ ԵՆ ՎԱՐՈՐԴԻՆ

Իրավապահները հիվանդանոցում հսկում են Շիրակի մարզում ողբերգական վթարի հետեւանքով ընտանիքի 6 անդամի կյանքը խլած BMW-ի վարորդին: Բանն այն է, որ սպասում են նշանակված դատաբժշկական փորձաքննության արդյունքներին, որպեսզի գործողություններ իրականացնեն BMW-ի վարորդի նկատմամբ:

Ապրիլի 10-ին ողբերգական վթար էր տեղի ունեցել Շիրակի մարզի Աղին բնակավայրի մոտակայքում: BMW եւ Opel ավտոմեքենաների բախման հետեւանքով 6 մարդ էր զոհվել, նրանցից 2-ը՝ երեխա, եւս 5 մարդ, նրանցից 3-ը՝ երեխա, մարմնական վնասվածքներով տեղափոխվել էին հիվանդանոց: Հոսպիտալացվածների վիճակը գնահատվել էր ծայրահեղ ծանր կամ ծանր:

Շիրակի մարզի Աղին բնակավայրի տարածքում տեղի ունեցած ավտովթարի դեպքի առթիվ նախաձեռնվել էր քրեական վարույթ, եւ Քննչականի փոխանցմամբ՝ վարույթ է հարուցվել Քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ «ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթեւեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ»:

Նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ: Քննչական կոմիտեն փոխանցել էր, որ նախաքննության ընթացքում մեկ անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, նրան ձերբակալելու որոշում է կայացվել: Ենթադրվում է, որ տվյալ անձը հիվանդանոցում գտնվող BMW-ի վարորդն է: Փաստացի ողբերգական դեպքից անցել է 1 ամիս, սակայն դեռեւս գործը տեղից չի շարժվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԽՐՃՎԵԼ Է ՏԱՆ ՄԵՋ

Երեկ՝ մայիսի 13-ին, խոշոր ու ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 14:40-ի սահմաններում «Կամազ» մակնիշի բեռնատարը Դավիթ Բեկի փողոցում դեռեւս անհայտ հանգամանքներում դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել մի քանի ավտոմեքենաների եւ մխրճվել բնակչի տան մեջ:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով վարորդը, ով արգելափակվել էր ավտոմեքենայում, տեղում մահացել է:

Նրա մարմինը դուրս բերելու համար դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ: Վթարի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ: Պարզվում են ավտոմեքենաների, վնասված տան սեփականատերերի, ինչպես նաեւ մահացած վարորդի ինքնությունը: Պարեկները պարզել են, որ մինչեւ նշված տան մեջ մխրճվելը, «Կամազ»-ը վթարի վայրից մոտ 1 կմ հեռավորության վրա բախվել է «Jeep» եւ «Kia» մակնիշի ավտոմեքենաներին, իսկ «Kia»-ն էլ բախվել է մեկ այլ մեքենայի: Դրանից հետո բեռնատարը շարունակել է ընթացքը եւ մխրճվել բնակչի տան մեջ: ArmLur.am-ը շտապել է դեպքի վայր՝ տեղում հասկանալու իրավիճակը: Բնակիչների խոսքով՝ բախման պահին տան բակում շուն է եղել, որը սատկել է: Ականատեսները պատմում էին նաեւ, որ տանտիրուհին խուճապահար լացելով զանգահարել է ամուսնուն՝ ասելով, որ շտապ հասնի տուն, ինչից հետո տղամարդը վազելով հասել է դեպքի վայր: Բնակիչները չէին ցանկանում ավել խոսել կատարվածի մասին՝ նշելով, որ վարորդը երիտասարդ տղա էր եւ մահացել է: «Kia»-ի եւ «Jeep»-ի վարորդները եւս հրաժարվել են մեկնաբանություն տալ՝ հաշվի առնելով ողբերգական իրավիճակը:

ԻՐԻՆԱ ԱՏԱՆՅԱՆ

ՈՎ Է ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼ

ՌԴ Քննչական կոմիտեն հայտնել է, որ Դոնեցկի բռնցքամարտի ֆեդերացիայի ղեկավար, «Արբատ» գումարտակի հիմնադիր Արմեն Սարգսյանի սպանությունը կազմակերպվել է Ուկրաինայի անվտանգության ծառայության եւ ՊՆ գլխավոր հետախուզական վարչության կողմից: Հարձակման ժամանակ օգտագործվել է հակահետեւակային բեկորային ական՝ պլաստիկ պայթուցիկի լրացուցիչ լիցքով:

Հիշեցնենք՝ փետրվարի 3-ին Մոսկվայի հյուսիս-արեւմուտքում գտնվող «Ալ առագաստներ» բնակելի համալիրի 29-հարկանի շենքում պայթյուն էր տեղի ունեցել: Պայթյունից անմիջապես հետո հայտնի դարձավ, որ 1 մարդ մահացել է, 4-ը՝ տարբեր աստիճանի վնասվածքներ ստացել, նրանց թվում է ԴԺՀ-ում կամավորական գումարտակի հիմնադիր Արմեն Սարգսյանը: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ նա մահացել է հիվանդանոցում:

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ

Անչափահաս աղջկան առեւանգած եւ նրա նկատմամբ սեռական բնույթի բռնի գործողություններ կատարած Ն.Ղ.-ի, Ա.Ա.-ի, Ա.Բ.-ի եւ Ս.Ս.-ի վերաբերյալ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի մայիսի 8-ին կայացրել է մեղադրական վերդիկտ՝ Քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով եւ 198-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Հիշեցնենք, որ դատախազը 2024 թվականի հունիսի 15-ին Ն.Ղ.-ի, Ա.Ա.-ի, Ա.Բ.-ի եւ Ս.Ս.-ի նկատմամբ հարուցել էր հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (անչափահասին առեւանգելը) եւ 198-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (անչափահասի նկատմամբ սեռական բնույթի բռնի գործողություններ կատարելը): Քննչական կոմիտեում քննված քրեական վարույթով պարզվել էր, որ 2023 թվականին անչափահասներ Ն.Ղ.-ն, Ա.Ա.-ն, Ա.Բ.-ն եւ Ս.Ս.-ն, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, խաբեությամբ առեւանգել են անչափահաս աղջկան, տեղափոխել Գյումրիում գտնվող կիսակառույց շենք եւ, փոխլրացնելով միմյանց գործողությունները, կատարել են սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, տեսաձայնագրել եւ, քննությամբ չպարզված հանգամանքներում, տեսագրությունը հրապարակել սոցիալական ցանցերից մեկի օգտահաշվում: Դատախազը 2025 թ. հունվարի 25-ին իրավասու դատարան էր հանձնել վերոնշյալ անձանց վերաբերյալ՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ քրեական վարույթի նյութերը:

ԼՈՒՐԵՐ

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՆ

Մայիսի 11-ին Համայնքային ոստիկանության Աշտարակի բաժնում տեղեկություն է ստացվել, որ Կարբի բնակավայրի դպրոցներից մեկում 13-ամյա անչափահասը դասընկերների կողմից պարբերաբար բռնության է ենթարկվում: Միջադեպի վերաբերյալ ո՛չ ուսումնական հաստատությունը, ո՛չ անչափահասի ծնողները ՆԳՆ ոստիկանություն հաղորդում չեն ներկայացրել: Աշտարակի համայնքային ոստիկանների տեղեկություններով պարզվել է, որ ապրիլի 17-ին անչափահասի եւ համադասարանցիների միջեւ տեղի է ունեցել հրմշտոց, որին միջամտել են դասընկերները, այնուհետեւ տեղեկացրել են դասղեկին: Անչափահասի մայրը մայիսի 11-ին հրավիրվել է Համայնքային ոստիկանության Աշտարակի բաժին, որտեղ հաղորդում է ներկայացրել, որ հրմշտոցի ընթացքում հարվածել են որդու գլխին, ինչի հետեւանքով նա ուշագնաց է եղել եւ բուժօգնության տեղափոխվել Կարբիի բուժամբուլատորիա, այնուհետեւ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն: Համայնքային ոստիկանները ձեռնարկած միջոցառումներով պարզել են վիճաբանության մասնակիցների ինքնությունը: ՆԳ նախարարի անունից դեպքի վերաբերյալ միջնորդագիր է ներկայացվել ԿԳՄՍ նախարարին: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Արագածոտնի մարզային քննչական վարչություն:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

Մայիսի 11-ին տեղեկություններ են ստացվել, որ նախորդ օրը՝ ժամը 17:00-ի սահմաններում, Ստեփանավան քաղաքի բնակիչ երեք տղամարդկանց միջեւ Գյուլագարակ համայնքում գործող ռեստորաններից մեկում վիճաբանություն է տեղի ունեցել: ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից հայտնում են, որ ՆԳՆ ոստիկանության փոխանցմամբ՝ պարզվել է, որ ալկոհոլ օգտագործելուց հետո 45 եւ 44 տարեկան տղամարդիկ վիճաբանել են համաքաղաքացու հետ, ձեռքերով հարվածներ հասցրել նրան՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Տղամարդիկ հայտնաբերվել եւ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալվել են: Նրանք կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել են Ստեփանավանի քննչական բաժին:

ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԲՌՆԱԳԱՆՁԵԼ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը: Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ Երեւան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի նախկին ղեկավար, ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Ռուբեն Գառնիկի Հովսեփյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ ՀՀ բռնագանձել՝

- 3 անշարժ գույք, որոնցից 2-ը՝ Երեւան քաղաքում, 1-ը՝ Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրում.
- 1 տրանսպորտային միջոց.
- 1 իրավաբանական անձում մասնակցություն.
- 236 միլիոն 827 հազար դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ:

● *Ըստ վիճակագրական տվյալների՝ մայիսի 13-ից 14-ը գրանցվել է 10 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ՝ ՎԱՏ ՎԻՃԱԿՈՒՄ

Հայաստանի համար գետերը ունեն նաեւ ռազմավարական նշանակություն, դրանց ջրերի մի մասն ամբարելը կբարձրացներ Հայաստանի, որպես պետության, նշանակությունը Ադրբեջանի հետ փոխհարաբերություններում: Սահմանամերձ Տավուշի մարզում ակնառու է Նիկոլ Փաշինյանի իշխանության 8 տարիներին ջրամբարների շինարարության ոլորտում դրսեւորված անգործությունը: Ոսկեպար, Կողբագետ, Հախում եւ այլ գետեր հոսում են Ադրբեջան, որտեղ կառուցված ոռոգման ջրամբարներում կուտակվում են: Մինչդեռ Տավուշի մարզի 25 հազար 394 հեկտար գյուղատնտեսական նշանակության վարելահողերից ոռոգվող է շուրջ 3700 հեկտարը: 2017 թվականին Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանը հայտարարեց, որ գոյություն ունի Տավուշի մարզում 14 փոքր եւ միջին ջրամբարների կառուցման ծրագիր: Դրանք հնարավորություն կտային կուտակել մինչեւ 10 միլիոն խորանարդ մետր ջուր, որի միջոցով ոռոգելի կդառնար 4 հազար հեկտար հողատարածք: Առաջնահերթ նախատեսվում էր կառուցել Հախումի եւ Կողբի ջրամբարները, դրանցում կուտակել 2 միլիոն խորանարդ մետր ջուր: Նախատեսվում էր փոքր եւ միջին ջրամբարների կառուցման համար ֆինանսական միջոցների խնդիրը լուծելու համար ներգրավել մասնավոր ներդրողների: Նախատեսվում էր, որ կառուցելիք ջրամբարները ոչ միայն կօգտագործվեին հողատարածքների, այգիների ոռոգման նպատակով, այլեւ այդ ջրամբարները կդառնային զբոսաշրջային վայրեր, ձկնաբուծության կենտրոններ: Սակայն այդ ծրագրերն այդպես էլ մնացին թղթի վրա, չիրականացվեցին: Մեծ խնդիր է նաեւ գործող ջրամբարների տեխնիկական զննությունը, տեխնիկական սպասարկումը, դրանց հիդրոտեխնիկական կառույցների վերանորոգումը եւ վերազինումը: 44 միլիոն խորանարդ մետր տարողությամբ Ջողազի ջրամբարը կառուցվել է խորհրդային շրջանում՝ 1976-1980 թթ.: Այն փաստացի հանդիսանում է հայ-ադրբեջանական սահմանագիծ: 1990-ական թվականների սկզբին այդ տարածքում մարտական գործողություններով պայմանավորված՝ սահմանագծում գտնվող ջրամբարի հիդրոտեխնիկական կառույցներումզննություն, նորոգումներ կատարելը խիստ վտանգավոր էր, ուստի չի արվել: Բերդ համայնքի տարածքում Հախումի, Ծիլի Ծովի եւ Տավուշի ջրամբարները տեխնիկական վերազինման, վերանորոգման խիստ կարիք ունեն: Վերջին անգամ նշված ջրամբարներում այդ աշխատանքները կատարվել են 24 տարի առաջ՝ 2002 թվականին, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԻԶԱՆԵՐ

ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է ԱՌԱՋԻՆ ԶԵԿՈՒՅՑԸ

2026 թվականի մայիսի 5-ին Եվրոպական Հանձնաժողովը Հայաստանին փոխանցեց Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի (ԳԾ) իրականացման առաջընթացի առաջին զեկույցը: Այն արձանագրում է ՀՀ իշխանությունների հստակ քաղաքական հանձնառությունը՝ իրականացնելու ԵՄ հեռ վիզաների ազատականացմանն ուղղված անհրաժեշտ բարեփոխումները: Այս մասին հայտնում են ՀՀ ներքին գործերի նախարարությունից:

Հայաստան-ԵՄ վիզաների ազատականացման շուրջ երկխոսությունը պաշտոնապես մեկնարկել է 2024թ. սեպտեմբերին, իսկ Գործողությունների ծրագիրը Հայաստանին է փոխանցվել է 2025թ. նոյեմբերին: Այն նախատեսում է 74 հենանիշի կատարում, որոնք իրականացվում են երկու փուլով. համապատասխան օրենսդրական եւ քաղաքականության շրջանակի ձեւավորում, դրանց գործնական իրականացման եւ կիրառության ապահովում: Առաջին զեկույցը գնահատում է Հայաստանի առաջընթացը առաջին խումբ հենանիշերի կատարման ուղղությամբ՝կենտրոնանալով բացառապես օրենսդրական եւ քաղաքականության շրջանակի վրա չորս կարեւոր ուղղություններով՝ փաստաթղթերի անվտանգություն, սահմանների, միգրացիայի եւ ապաստանի կառավարում, հասարակական կարգ եւ անվտանգություն, արտաքին հարաբերություններ եւ հիմնարար իրավունքներ: Թեեւ Գործողությունների ծրագրի տրամադրումից կարճ ժամանակահատված է անցել, Հայաստանի կառավարությունն արդեն իսկ նախաձեռնել կամ ծրագրել է պահանջվող օրենսդրական եւ քաղաքական փոփոխությունների զգալի մասը, ինչը բարձր է գնահատվում ԵՄ կողմից: Զեկույցում մանրամասն ներկայացված են Հայաստանի կողմից չորս հիմնական ուղղություններով ձեռնարկված նշանակալի քայլերն ու գրանցած առաջընթացը:

Փաստաթղթերի անվտանգություն

2025 թվականի հուլիսին Հայաստանն ընդունել է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» նոր օրենքը, որը թույլ կտա ստեղծել բնակչության միասնական եւ անվտանգ էլեկտրոնային ռեգիստր: Բացի այդ, կնքվել է պետություն-մասնավոր գործընկերություն պայմանագիր՝ ազգային կենսաչափական նույնականացման համակարգի արդիականացման նպատակով, ինչը կապահովի ապագա անձնագրերի եւ անձը հաստատող փաստաթղթերի համապատասխանությունը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) կողմից սահմանված ամենաբարձր չափանիշներին:

Սահմանների, միգրացիայի եւ ապաստանի կառավարում

Հայաստանն ակտիվորեն մշակում է Սահմանների համալիր կառավարման



(IBM) 2026-2029 թվականների ռազմավարությունը: Հայաստանն առաջընթաց է գրանցել նաեւ մի շարք վարչարարական ծառայությունների թվայնացման գործընթացում: Մասնավորապես, 2026 թվականի հունվարից գործարկվում է Քաղաքացիության գործերի էլեկտրոնային կառավարման համակարգը, ընթացքի մեջ է նաեւ օտարերկրյա քաղաքացիների համար աշխատանքի եւ կացության թույլտվությունների ընթացակարգերի թվայնացումը:

Հայաստանը շարունակում է ամրապնդել համագործակցությունը ԵՄ անդամ պետությունների եւ երրորդ երկրների հետ՝ հետընդունման (readmission) ոլորտում: Նկատվում են զարգացումներ սահմանային ուղղորդման մեխանիզմների ամրապնդման, ապաստանի գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի ստեղծման ուղղությամբ աշխատանքների ուղղությամբ:

Հասարակական կարգ եւ անվտանգություն

2018-ից հետո Հայաստանը զգալիորեն ուժեղացրել եւ միջազգային չափանիշներին է համապատասխանեցրել հակակոռուպցիոն իրավական եւ ինստիտուցիոնալ համակարգը: Հայաստանի կողմից «Հանցավորության կանխարգելման 2026-2033 թթ. ռազմավարության» մշակման մեկնարկը փաստում է Հայաստանի մտադրությունը՝ ապացույցների վրա հիմնված քաղաքականության, ինստիտուցիոնալ համակարգման եւ նպատակային կանխարգելիչ միջոցառումների միջոցով ամրապնդելու հանցավորության կանխարգելման կարողությունները:

Զեկույցում անդրադարձ է կատարվում նաեւ ՆԳՆ կազմում ձեւավորված նոր մասնագիտացված ստորաբաժանմանը՝ Հանցավորության վիճակագրության եւ հետազոտական կենտրոնին, որը բացահայտելու է հանցավորության օրինաչափությունները, կանխատեսելու է հանցագործությունների հավանական ռիսկային գոտիները եւ դրանց հիման վրա ներկայացնելու է հանցավորության կանխարգելմանն ուղղված առաջարկություններ եւ ուղղորդող վերլուծություններ: Թրաֆիքինգի դեմ պայքարի նոր ԳԾ-ն ընդունվելու է 2026 թվականին, եւ այդ ուղղությամբ իրականացվող նոր ծրագրերի ավելացումը նույնպես դրական է գնահատվել ԵՄ կողմից:

Եվրոպական կողմը դրական է գնահատում նաեւ նոր եւ անկախ անձնական տվյալների պաշտպանության մարմնի ստեղծումը, որի գործունեությունը համահունչ է լինելու եվրոպական անձնական տվյալների պաշտպանության սկզբունքներին եւ լավագույն փորձին:

Հիմնարար իրավունքներ

Հայաստանն այժմ մշակում է «Խտրականության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» օրենքը՝ եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Բացի այդ, Հայաստանը 2025 թվականին ընդունել է երեխաների իրավունքների վերաբերյալ նոր օրենսդրություն՝բռնությունից եւ շահագործումից պաշտպանության առավել համապարփակ շրջանակ ապահովելու համար: Ողջունելով դրական դինամիկան՝Հանձնաժողովը միաժամանակ ընդգծում է, որ առաջընթացի գնահատումը կատարվում է բացառապես արդյունքահեն մոտեցմամբ եւ պայմանավորված է բոլոր հենանիշերի արդյունավետ եւ հետեւողական իրականացմամբ:

Զեկույցում ներկայացված են նաեւ առաջարկություններ/ռեկոմենդացիաներ՝ ուղղորդելու Հայաստանին լրացնելու արձանագրված բացերը: Ընդհանուր առմամբ, Հանձնաժողովը շեշտում է, որ բոլոր ոլորտներում անհրաժեշտ է ապահովել ընդունված քաղաքականությունների եւ օրենքների գործնական, հետեւողական եւ արդյունքահեն իրականացումը:

Զեկույցում արտացոլված տվյալներն ընդգծում են Հայաստանի եւ ԵՄ միջեւ խորացող կապերը: ՀՀ քաղաքացիներին տրամադրված Շենգենյան վիզաների թիվը կայուն աճ է գրանցել՝ 2019 թվականի 51000-ից 2024 թվականին հասնելով 86300-ի, ընդ որում՝ զգալիորեն ավելացել է բազմակի մուտքի արտոնագրերի տեսակարար կշիռը (այժմ՝ 43.5%): Ավելին, վիզաների մերժման մակարդակը դրական նվազման միտում է գրանցել, ինչն արտացոլում է ճամփորդող ՀՀ քաղաքացիների նկատմամբ վստահության աճը:

Վիզաների ազատականացման երկխոսությունը կշարունակվի այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է սահմանված բոլոր հենանիշերի լիարժեք կատարման ապահովման համար: Հանձնաժողովը կշարունակի հետեւել Գործողությունների ծրագրով սահմանված բոլոր հենանիշերի կատարումը՝ ԵՄ անդամ երկրների փորձագետների աջակցությամբ եւ այդ նպատակով առաջիկայում Հայաստանում կկազմակերպվեն լրացուցիչ գնահատման առաքելություններ: ԵՄ-ն հավատարիմ է մնում Հայաստանի բարեփոխումներին աջակցելու գործին՝ տրամադրելով հատուկ տեխնիկական եւ ֆինանսական օգնություն, մասնավորապես՝ Հայաստանի համար նախատեսված «Դիմակայունության եւ աճի» ծրագրի շրջանակում:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի կառավարության որոշմամբ՝ գումար կհատկացվի Լիբանանի Հանրապետությունում առկա պատերազմական գործողությունների հետեւանքով առաջացած հումանիտար ճգնաժամի պայմաններում Հայաստանի Հանրապետության կողմից մարդասիրական աջակցություն տրամադրելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Կառավարության նիստում հայտարարվեց, որ նախատեսվում է պահուստային ֆոնդից հատկացնել շուրջ 60 մլն դրամ, որից 34 մլն դրամը պարենային ապրանքների (սննդամթերք) եւ սանիտարահիգիենիկ պարագաների ձեռքբերման, իսկ 26,0 մլն դրամը՝ դեղերի ձեռքբերման նպատակով, որոնք, որպես մարդասիրական աջակցություն, կտրամադրվեն Լիբանանի Հանրապետությանը:

Հիմնավորման համաձայն՝ Լիբանանի Հանրապետությունում ընթացող պատերազմական գործողությունների հետեւանքով ձեւավորվել է հումանիտար ճգնաժամ, որի պայմաններում զգալիորեն աճել է բնակչության պարենային ապրանքների, ինչպես նաեւ սանիտարահիգիենիկ եւ առաջին անհրաժեշտության պարագաների եւ դեղերի կարիքը:

Հայաստանի Հանրապետությունը նախատեսում է տրամադրել նպատակային մարդասիրական աջակցություն՝ ապահովելով տուժած բնակչության առաջնային կարիքների բավարարման համար անհրաժեշտ պարենային եւ սանիտարահիգիենիկ ապրանքների, դեղերի տրամադրումը:

● *Վիճակագրության համաձայն՝մայիսի 13-ից 14-ը ՀՀ-ում հայտնաբերվել է 10 հետախուզվող, կամավոր ներկայացել՝1-ը:*

ԼՈՒՐԵՐ

«ԴԱՍԱԿԱՆ» ԱՎԱՆԴ

Հայէկոնոմբանկի «Դասական» ժամկետային ավանդը երկարաժամկետ խնայողությունների համար բարձր եկամտաբերություն ապահովող տարբերակ է:

Ներդնելով «Դասական» ավանդ՝ հնարավոր է ստանալ առավելագույն օգուտ յուրաքանչյուր խնայողությունից:

«Դասական» ավանդի հիմնական պայմանները

Գումար՝ 100 հզր-100 մլն դրամ

Ժամկետ՝ մինչեւ 3 տարի

Տարեկան անվանական տոկոսադրույք՝ առավելագույնը 10.4%

Տարեկան տոկոսային երկամտաբերություն՝ առավելագույնը 10.64%

Ավանդը հնարավոր է ներդնել 4 արժույթով (Դ, $, €, Բ) եւ համալրել ներդրված սկզբնական գումարի առավելագույնը հնգապատիկի չափով:

Հիշեցնենք, որ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ երաշխավորված դրամային ավանդի առավելագույն չափը 16 մլն դրամ է, իսկ արտարժութային ավանդի առավելագույն գումարը՝ 7 մլն դրամ:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

«ԱԿԲԱ ԲԱՆԿ»

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը տեղի կունենա 2026 թվականի մայիսի 27-ին՝ Երեւանի ժամանակով ժամը 15:00-ին, Գաֆէսճեան արվեստի կենտրոնի «Հատուկ միջոցառումների» սրահում (հասցե՝ ՀՀ, ք. Երեւան 0009, Թամանյան 10): Ֆիզիկապես չներկայացած բաժնետերերը հնարավորություն կունենան մասնակցել տարեկան ընդհանուր ժողովին եւ քվեարկել հատուկ նախատեսված կապի միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Ընդհանուր ժողովին մասնակցելու եւ տարեկան շահութաբաժիններ ստանալու իրավունք կունենան «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բոլոր այն բաժնետերերը (անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից), ովքեր 2026 թվականի ապրիլի 21-ի ժամը 18:00-ի դրությամբ ընդգրկված կլինեն բանկի բաժնետերերի ռեեստրում: Շահութաբաժինների չափի եւ վճարման մասին վերջնական որոշումը կընդունվի ընդհանուր ժողովի կողմից: Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը եւ անհրաժեշտ տեղեկատվությունն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բոլոր բաժնետերերին ուղարկվել է մայիսի 6-ին՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ Գ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՓՄՁ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայէկոնոմբանկի Գործադիր տնօրեն Արտակ Առաքելյանը մասնակցեց Հայաստանի բանկերի միության, ՀՀ կենտրոնական բանկի եւ Գերմանահայկական հիմնադրամի կազմակերպած «ՓՄՁ ոլորտ. ազդեցություն եւ զարգացման մարտահրավերներ» թեմայով համաժողովին:

Մայիսի 12-ին Երեւանում կայացած համաժողովը նվիրված էր միջազգային կառույցների, ինչպես նաեւ ՀՀ առեւտրային բանկերի միջոցով իրականացվող ծրագրերի ազդեցությանը Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման վրա: Համաժողովի շրջանակում տեղի ունեցավ պանելային քննարկում գործադիր եւ օրենսդիր մարմնի, ինչպես նաեւ մասնավոր ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկման նպատակն էր վերհանել ոլորտի արդյունավետ զարգացմանը խոչընդոտող խնդիրները եւ առաջարկել լուծումներ, որոնք կխթանեն Հայաստանի տնտեսության աճը:

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՓՄՁ-ները տնտեսության շարժիչ ուժն են՝ Հայէկոնոմբանկն ակտիվորեն ներգրավված է ՓՄՁ վարկավորման ոլորտում: Մենք աշխատում ենք ինչպես պետական ծրագրերի շրջանակում եւ միջազգային կազմակերպություններից ներգրավված միջոցներով, այնպես էլ սեփական ռեսուրսներով: ՓՄՁ պորտֆելը Հայէկոնոմբանկում կազմում է մոտ 126 մլրդ դրամ, ինչն առեւտրայի վարկերի մոտ 60%-ն է, իսկ պետական աջակցությամբ տրամադրվող վարկերի ծավալը գնահատվում է 13 մլրդ դրամ: Այս թվերը, թերեւս, խոսում են Բանկի համար ոլորտի կարեւորության մասին», - իր ելույթում նշեց Հայէկոնոմբանկի Գործադիր տնօրենը:

Անդրադառնալով բիզնեսներին առաջարկվող ֆինանսական գործիքներին՝ Արտակ Առաքելյանը նշեց, որ Հայէկոնոմբանկն առաջարկում է տարատեսակ առեւտրային վարկեր եւ գործընկերության ծրագրեր՝ հնարավորություն տալով ձեռներեցներին ընտրելու բիզնեսի զարգացման առավել հարմար գործիք:

Համաժողովը կարեւոր հարթակ էր ՓՄՁ ոլորտում պետություն-մասնավոր հատված երկխոսության ամրապնդման եւ բիզնեսների զարգացման համար ավելի բարենպաստ լուծումներ գտնելու համար:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆԸ ՄԻՋԱԴԵՊԻ ՄԱՍԻՆ Գ

«Միասնության թեւեր» կուսակցության կառավարման խորհրդի անդամ Դավիթ Անանյանը Ֆեյսբուքի իր էջում գրել է, որ Էրեբունիում ՔՊ-ական պատգամավոր Հայկ Կոնջորյանի աներն իրենց քարոզարշավի ժամանակ բարձրաձայն բղավում էր՝ ոչ մեկին խոսքի հնարավորություն չտալով՝ մոլեգին պաշտպանելով գործող իշխանություններին ու Նիկոլ Փաշինյանին:

Նա մասնավորապես գրել է. «Երեկ քարոզարշավի հերթական օրն էր: Էրեբունի վարչական շրջանում շրջում էինք, զրուցում մեր համաքաղաքացիների հետ, ներկայացնում ծրագրերը, բաժանում մեր նախընտրական բուկլետները:

Տարբեր են մարդիկ: Կան ընդգծված հայրենասերներ, կան նաեւ այս իշխանությունների անկեղծ պաշտպաններ: Բայց, որքան էլ տարբեր լինեն քաղաքական պատկերացումները, գրեթե միշտ հնարավոր է լինում խոսել, լսել միմյանց, անգամ՝ չհամաձայնելով:

Եւ հենց այդ պատճառով երեկվա մի փոքր դրվագը մտորելու առիթ տվեց: Ավագ սերնդի մի հայրենակից, բառի ուղիղ իմաստով, հարձակվեց մեզ վրա՝ մոլեգին պաշտպանելով գործող իշխանություններին ու Նիկոլ Փաշինյանին: Մեր ցանկացած փորձ՝ զրույցը տեղափոխել կառուցողական քննարկման դաշտ, ապարդյուն էր: Նա չէր լսում: Չէր էլ փորձում լսել: Պարզապես բարձրաձայն բղավում էր՝ ոչ մեկին խոսքի հնարավորություն չտալով:

Մենք բարեհամբույր հրաժեշտ տվեցինք ու հեռացանք: Ճանապարհին մտածում էի՝ ի՞նչն է մարդկանց մի մասին հասցնում այսպիսի մոլեռանդ նիկոլապաշտության: Ի՞նչն է ստիպում մարդուն հրաժարվել բանավեճից, լսելու կարողությունից, նույնիսկ սեփական արժանապատվությանը հարիր զսպվածությունից:

Պատասխան չունեի:

Մինչեւ քիչ անց մեզ ասացին, որ այդ «հորեղբայրը», ամենայն հավանականությամբ, ՔՊ-ական պատգամավոր Հայկ Կոնջորյանի աներն է: Անկեղծ ասած՝ ուրախացա: Եթե դա ճիշտ է, ապա շատ բան իր տեղն է ընկնում: Հասկանում ես մոտիվացիան: Հասկանում ես անձնական շահի, կապերի, համակարգային կախվածությունների այն շղթան, որը հաճախ ներկայացվում է որպես «գաղափարական հավատարմություն»:

Հենց սա է այսօրվա նիկոլապաշտության ամենաբնորոշ ողբերգությունը: Այն վաղուց է դադարել գաղափար լինելուց եւ, ըստ էության, վեր է ածվել անձնական շահի պաշտպանության բնազդի»:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԵՎՐԱՏԵՍԻԼ»

ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ԱՄԵՆԱԿԱՆԴԱՂԱՅԻՆ «ԵՎՐԱՏԵՍԻԼ»-Ը

«Եվրատեսիլի» թեման՝ «United by Music» («Միավորված երաժշտությամբ»), երբեմ այսման դարադոքսալ չի հնչել, որքան այս տարի, քանի որ Վիեննան դատապարտվում է հյուրընկալել մոլորակի ամենակենսուրախ, էքսցենտրիկ եւ միաժամանակ լարված երաժշտական մրցույթներից մեկը, հաղորդում է THR-ը: Այս մասին գրում է News.am-ը:

Բացման օրվանից ընդամենը մեկ շաբաթ առաջ Ավստրիայի մայրաքաղաքը նման էր ոչ թե տոնական մշակութային կենտրոնի, այլ խիստ ամրացված բարձր անվտանգության կառույցի: Շտադիալեն՝ մրցույթի գլխավոր ասպարեզը, որը գտնվում է Վիեննայի ամենաաղքատ թաղամասերից մեկում, վերածվել է վիրտուալ պատերազմական գոտու. նոր տեսախցիկները հսկում են փողոցները, անվտանգության աշխատակիցները պարեկում են յուրաքանչյուր մուտք 24/7 ռեժիմով, իսկ Եվրատեսիլի լեգենդար երգերի վերնագրերով զարդարված հսկայական բետոնե արգելապատնեշներն ու ցանկապատերը միաժամանակ գովազդում են փառատոնը եւ ծառայում որպես ժամանակակից աշխարհի ռիսկերի խիստ հիշեցում:

Տեղացի բնակիչները ստիպված են դիմանալ համերգային համալիրի շուրջ մոտ 30,000 քառակուսի մետր հանրային կանաչ տարածքի փակմանը, որը բռնագրավել է միջոցառման անվտանգության համար: Հարեւանների խոսքով՝ կազմակերպիչներն օգտագործում են անօդաչու թռչող սարքեր, շների ստորաբաժանումներ եւ լայնածավալ ռումբերի ստուգումներ: Այս ամենը մրցույթի համար, որն ավանդաբար ավելի շատ կապված է փայլերի, փոփ հիթերի, ծիծաղելի զգեստների եւ երաժշտական կիչչի հետ, քան աշխարհաքաղաքական ճգնաժամի: Սակայն այս տարվա Եվրատեսիլը դարձել է լուրջ միջազգային հակամարտության թատերաբեմ: Պատճառը Իսրայելի մասնակցությունն է, որը աննախադեպ քաղաքական պառակտում է առաջացրել: Իսպանիան, Սլովենիան, Իսլանդիան, Իռլանդիան եւ Նիդեռլանդները բոյկոտել են մրցույթը՝ իրենց որոշումը որակելով որպես բողոք իսրայելական պատվիրակության մուտքի դեմ: Սա Եվրատեսիլի պատմության մեջ ամենամեծ քաղաքական դրդապատճառներով բոյկոտն է:

Հատկապես խորհրդանշական է Սլովենիայի մերժումը, որի ազգային հեռարձակողը որոշել է մրցույթի փոխարեն ցուցադրել «Պաղեստինի ձայները» վավերագրական ֆիլմը: Երկրի ղեկավարությունը պնդում է, որ Իսրայելը Եվրատեսիլն օգտագործում է որպես քաղաքական հարթակ, ինչը, նրանց կարծիքով, խաթարում է երաժշտական չեզոքության գաղափարը:

Միեւնույն ժամանակ, Ավստրիայի իշխանությունները կոշտ դիրքորոշում են որդեգրել. Իսրայելը պետք է մասնակցի մրցույթին՝ անկախ հնարավոր սպառնալիքներից: Վիեննան տեղակայել է ավելի քան 500 մասնավոր անվտանգության աշխատակից, 180 նոր տեսախցիկ, անօդաչու թռչող սարքերի դեմ պայքարի համակարգեր, հետազոտող շներ եւ նույնիսկ համագործակցել է ՀԴԲ-ի Նյու Յորքի մասնաճյուղի հետ՝ կիբերսպառնալիքները վերահսկելու համար: Անվտանգության մասշտաբները ավելի շատ նման են միջազգային գագաթնաժողովի, քան երաժշտական փառատոնի:

Լարվածությունն ավելի է սրվում այն փաստով, որ մրցույթի եզրափակիչը համընկնում է Նաքբայի օրվա հետ, որը խորհրդանշական նշանակություն ունի պաղեստինցիների համար: Ավստրիայի ոստիկանությունն արդեն իսկ կանխատեսում է լայնածավալ բողոքի ցույցեր, շրջափակումներ եւ հնարավոր չարտոնված գործողություններ եզրափակիչ շոուի օրը: «Եվրատեսիլի» քաղաքականացումը նորություն չէ, բայց այսօր այն հասել է աննախադեպ մակարդակի: Հիմնադրվելով 1956 թվականին՝ որպես հեռուստատեսային հեռարձակման միջոցով Եվրոպան միավորելու փորձ, մրցույթը երկար ժամանակ խուսափում էր մասնակից երկրների քաղաքական ռեժիմների գնահատումից: Սակայն 2022 թվականին Ռուսաստանին մրցույթից բացառելուց հետո շատերը սկսեցին պահանջել նմանատիպ միջոցներ Իսրայելի դեմ:

Եվրոպական հեռարձակողների միությունը հայտնվել է չափազանց դժվարին իրավիճակում՝ փորձելով պահպանել հավասարակշռությունը պաշտոնական չեզոքության եւ քաղաքական ճնշման միջեւ: Նույնիսկ մրցույթի համար հավատարմագրված լրագրողները բախվում են խիստ կանոնների՝ ավելի քան 110 էջ հրահանգների, վարքագծի կանոնների, կիբերանվտանգության միջոցառումների եւ սահմանափակումների: Այս փաստաթղթերը արգելում են ոչ միայն քաղաքական խոսքը, այլեւ ամենաանսպասելի բաները՝ կուլիսներում վարքագծի որոշակի ձեւերից մինչեւ թվային շանտաժի հնարավոր ռիսկեր: Վիեննայի փողոցներում մթնոլորտը հակասական է. մի կողմից՝ անհոգ երկրպագուներ, երաժշտություն եւ երեկույթներ, մյուս կողմից՝ պայուսակների, անօդաչու թռչող սարքերի, մեծ առարկաների եւ նույնիսկ մանկասայլակների արգելքներ: Եվրատեսիլի ավանդական երկրպագուների գոտին, շրջապատված է խիստ սահմանափակումներով, իսկ անվտանգության աշխատակիցները ուշադիր հետեւում են այցելուների յուրաքանչյուր աքսեսուարին:

Չնայած կազմակերպիչների տոնական մթնոլորտը պահպանելու բոլոր ջանքերին, Եվրատեսիլ 2026-ը արդեն պատմության մեջ է մտել որպես ամենաքաղաքականացված մրցույթներից մեկը: Հարցը մնում է. կարո՞ղ է երաժշտությունը իսկապես միավորել Եվրոպան, երբ բեմը համաշխարհային հակամարտությունների, վախերի եւ գաղափարախոսական բախումների արտացոլումն է:

Վիեննան փորձում է ապացուցել, որ դա հնարավոր է: Սակայն այսօրվա իրականության մեջ նույնիսկ աշխարհի ամենակենսուրախ փոփ փառատոնը այլեւս չի կարող գոյություն ունենալ քաղաքականությունից դուրս: Եվրատեսիլը աշխարհին ցույց է տալիս ոչ միայն այն, ինչ կարող է լինել, այլեւ այն, ինչ է իրականում:

ՈՐՔԱՆ ԳՈՒՄԱՐ Է ՀԱՏԿԱՑՎԵԼ

ԿԳՄՍ նախարարության հովանավորությամբ Հանրային հեռուստաընկերության եւ Եվրոպական հեռարձակողների միության համատեղ ջանքերով հունիսի 6-ին Երեւանում կանցկացվի «Դասական Եվրատեսիլ» միջազգային 22-րդ մրցույթը: Այս մասին հայտնում է նախարարությունը:

Այս նպատակով Կառավարությունը հատկացրել է շուրջ 665 միլիոն դրամ« որոշումն ընդունվել է գործադիրի երեկվա նիստում: ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ միջոցառումը հնարավորություն կտա Հայաստանը հերթական անգամ դիրքավորել միջազգային հարթակում, մասնավորապես՝ դասական արվեստի ոլորտում, ինչը, նախարարի դիտարկմամբ, առանձնահատուկ կարեւորություն ունի:

Մրցույթի շրջանակում նախատեսվում են նաեւ մշակութային ծրագրեր հյուրերի համար, որոնք, ըստ Ժաննա Անդրեասյանի, հնարավորություն կտան ներկայացնելու Հայաստանի հարուստ մշակութային ժառանգությունը՝ թանգարանները, արվեստի կենտրոնները՝ խթանելով հետագա զբոսաշրջային հոսքերը: Հայաստանի ներկայացուցիչը կլինի 15-ամյա ֆլեյտահարուհի Էլեն Վիրաբյանը, որը, նախարարի խոսքով, արդեն ունի միջազգային ճանաչում եւ տարբեր բեմերում հանդես է եկել հեղինակավոր նվագախմբերի հետ:

ԼՈՒՐԵՐ

ԾՆՈՒՆԴ

Մայիսի 14-ին ծնվել է Մարկ Ցուկերբերգը՝ ամերիկացի համակարգչային ծրագրավորող եւ գործարար, ով համարվում է սոցիալական մեդիայի զարգացման ամենաազդեցիկ դեմքերից մեկը: Նա ծնվել է 1984 թվականին Նյու Յորքում՝ բժիշկների ընտանիքում, եւ դեռ փոքր տարիքից հետաքրքրվել է ծրագրավորմամբ՝ ստեղծելով տարբեր ծրագրեր եւ խաղեր: Նա ուսանել է Հարվարդի համալսարանում, որտեղ իր ընկերների հետ 2004 թվականին ստեղծեց Ֆեյսբուք սոցիալական ցանցը, որը սկզբում նախատեսված էր միայն ուսանողների համար, սակայն շատ արագ տարածվեց եւ դարձավ համաշխարհային հարթակ: Մի քանի տարվա ընթացքում այն ձեռք բերեց միլիոնավոր օգտատերեր եւ փոխեց մարդկանց հաղորդակցվելու ձեւը ամբողջ աշխարհում:

Ցուկերբերգը հայտնի է ոչ միայն իր տեխնոլոգիական հաջողություններով, այլ նաեւ իր պարզ կենսակերպով եւ բարեգործական գործունեությամբ: Նա իր կնոջ հետ հիմնել է նախաձեռնություն, որը աջակցում է գիտությանը, կրթությանը եւ առողջապահությանը: Վերջին տարիներին նա կենտրոնացել է մեթավերս գաղափարի զարգացման վրա՝ փորձելով ստեղծել նոր թվային միջավայր, որտեղ մարդիկ կարող են շփվել, աշխատել եւ ստեղծագործել վիրտուալ իրականության մեջ: Նրա գործունեությունը շարունակում է մեծ ազդեցություն ունենալ ժամանակակից տեխնոլոգիական աշխարհի վրա:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՏԻՏՂՈՍՆԵՐ ՆՎԱՃԵԼ

Միլանի «Ինտեր»-ը դարձավ Իտալիայի ֆուտբոլի գավաթի խաղարկության հաղթող: Հռոմի Օլիմպիական մարզադաշտում կայացած Իտալիայի գավաթի խաղարկության եզրափակչում «Ինտեր»-ը մրցեց «Լացիո»-ի հետ ու առավելության հասավ 0:2 հաշվով: Միլանյան ակումբի կազմում աչքի ընկավ Լաուտարո Մարտինես ու մեկ անգամ էլ ինքնագոլի հեղինակ դարձավ Մարուսիչը: Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ ու բոլոր ժամանակների լավագույն ռմբարկու Հենրիխ Մխիթարյանը «Ինտեր»-ի մեկնարկային կազմում չէր, սակայն փոխարինման մտավ 68-րդ րոպեին: Իտալիայի այս գավաթը Հենրիխ Մխիթարյանի կարիերայի 21-րդ տիտղոսն է:

● Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում մայիսի 17-ին՝ ժամը 13:00-ին, կկայանա «ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՈՔՋՅՈՒՆԸ» ներկայացումը:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչ է գնաճը:

Լեւոն Աբրահամյան,
33 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն հետեւում է ժամանակային շարքերին, որոնք ներկայացնում են գների շարժը, այսինքն՝ գների ինդեքսները Հայաստանի տնտեսության ընտրված ոլորտների համար: Սպառողական շուկայի համար դա սպառողական գների ինդեքսն է, ընդհանուր տնտեսության համար՝ ՀՆԱ դեֆլյատորը, որը ներկայացնում է տնտեսությունում արտադրված բոլոր ապրանքների եւ ծառայությունների միջին աճը. կա արտահանման գների ինդեքս արտաքին առեւտրի համար եւ ներմուծման գների ինդեքս ներքին առեւտրի համար եւ այլն: Գնաճը տնտեսության որեւէ հատվածում որեւէ ինդեքսի աճի տեմպն է եւ հաճախ ունի հաշվարկման հատուկ մեթոդաբանություն: Թե՛ աշխարհի բոլոր երկրներում, թե՛ Հայաստանում գնաճ տերմինն օգտագործվում է հիմնականում, երբ խոսքը սպառողական գների ինդեքսի աճի տեմպի մասին է: Թեեւ այն լիովին չի արտացոլում տնտեսությունը, այնուամենայնիվ, այն ամենաշատն է ընկալվում հասարակության կողմից:

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ընդգրկվել որակավորված ներքին աուդիտորների ցանկում:

Արեգ Սիմոնյան, 43 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկվելու նպատակով՝ ՀՀ ֆինանսների նախարարություն կարող են դիմում ներկայացնել այն անձիք, ովքեր ունեն աուդիտորի ներքոնշյալ որակավորումներից առնվազն մեկը.

1. Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի միջազգայնորեն ճանաչված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորումը (Certified Internal Audit - CIA) կամ հանրային հատվածի աուդիտորի որակավորումը (Certified Government Auditing Professional - CGAP).

2) որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) կողմից անցկացված առնվազն բազային (ֆունդամենտալ) 9 քննության (F1-F9) արդյունքում տրված հաշվապահ-աուդիտորի որակավորումը.

3) հանրային ֆինանսների եւ հաշվապահության արտոնագրված ինստիտուտի (Chartered Institute of Public Finance Accountancy՝ CIPFA) կողմից տրված որակավորումը.

4) որակավորված հանրային հաշվապահների ամերիկյան ինստիտուտի (American Institute of Certified Public Accountants) կողմից տրված հանրային հաշվապահի որակավորումը (CPA):

2. Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի այլ կառույցների կողմից տրված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորումը.

2) Հայաստանի Հանրապետության հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիայի (ՀՀԱԱ) կողմից տրված աուդիտորի որակավորումը:

Դիմումին կից պետք է ներկայացնել.

- անձնագրի պատճենը.
- համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը.
- հայտարարություն:

ՀՀ Ֆինանսների նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝shamshyan.com-ի

Ամբողջությամբ փտած ու դարն ապրած հաստաբուն ծառը արմատից պոկվել ու տապալվել է՝ վնասելով մի քանի ավտոմեքենա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 4 + 8 + 14 + 17
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 + 14 + 17
Կոտայքի նախալեռներ	+ 10 + 13 + 17 + 20
Գեղարքունիք	+ 4 + 7 + 13 + 17
Լոռի	+ 5 + 9 + 18 + 21
Տավուշ	+ 7 + 10 + 19 + 22
Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 13 + 16
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 12 + 15 + 19

Արարատ	+ 9 + 13 + 18 + 21
Արմավիր	+ 11 + 14 + 20 + 23
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 7 + 13 + 16
Վայոց ձորի նախալեռներ	+ 11 + 14 + 19 + 23
Սյունիքի լեռներ	+ 3 + 6 + 12 + 15
Սյունիքի նախալեռներ	+ 6 + 10 + 18 + 21
Սյունիքի հովիտներ	+ 13 + 16 + 23 + 26
Երեւան	+ 12 + 14 + 19 + 21

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.05.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*